

Երևանի «Հայրուսակ» համալսարանի
ռեկտոր՝ Ս. Լ. Հարությունյան

«31» հոկտեմբերի 2024թ.

Առաջատար կազմակերպության կարծիքը

Աստղիկ Լևոնի Խորշուդյանի

«Իրավական պետության հայեցակարգի ձևավորումը և զարգացումը
իրավական ուսմունքների հոլովույթում» թեմայով ԺԲ 00.01 «Պետության և
իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների
պատմություն» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսության
վերաբերյալ

Գրախոսվող ատենախոսական աշխատանքը նվիրված է իրավական
պետության հայեցակարգային ստեղծումների քննական ուսումնասիրությանը:

Գտնում ենք, որ հետազոտության թեմայի արդիականությունը պայմանավորված
է մեզանում իրավական պետության կայացման և իրավունքի գերակայության
հաստատման բարդ ու դժվար խնդիրների լուծման անհրաժեշտությամբ:

Աշխատանքում հեղինակը հանգամանորեն քննարկել է պետական
իշխանության իրավական կազմակերպման գաղափարների ձևավորման ու
զարգացման խնդիրները պատմական երկարատև ժամանակահատվածում՝ հնագույն
ժամանակներից մինչև մեր օրերը, ինչպես նաև համակողմանի վերլուծության է
ենթարկել երկրում սոցիալ-իրավական պետության կայացման անհրաժեշտ
նախադրյալները և հեռանկարները սահմանադրական զարգացումների
համատեքստում: Հեղինակն իրավացիորեն նշում է, որ իրավական պետության մասին
տեսական հարցադրումները, չնայած իրենց երկարատև պատմության, այսօր էլ մնում
է հրատապ ու արդիական՝ տեսական և գործնական առումով:

Բացի դրանից, իրավունքով կառավարելու և իշխանությունը իրավունքով սահմանափակելու գերնպատակին հասնելու համար, հեղինակը առաջարկում է որոշել «սովերային կառավարաման աստիճան», այսինքն՝ թե կառավարող իշխանությունն որքանո՞վ է գտնվում սահմանադրական ինստիտուտների և հաստատությունների իրական տիրապետման ներքո և որքանո՞վ է դա կրում պատրանքային բնույթ: Սա հեղինակի շատ դիպուկ նկատառումն է. որը հիմնավորվում է մեր երկրի ավելի քան երեսուն տարվա պետական շինարարության պրակտիկայով: Սա նաև աշխատանքի գիտական նորոյթի կարևոր տարրերից է: Աշխատանքում հեղինակը հիմնավորում է նաև այն հայեցակարգային մոտեցումը, ըստ որի հայոց պետականության զարգացման արդի փուլում «իրավական պետությունը» աստիճանաբար վերափոխվում է «սոցիալ-իրավական» պետության, որի հիմնական առանձնահատկություններից է ոչ միայն «իրավունքով կառավարելը», այլ նաև իրավունքի միջոցով ստեղծել «սոցիալական արդարության» սկզբունքի կենսագործման ապահովումը հասարակական հարաբերությունների բոլոր ոլորտներում:

Հիրավի, դրական գնահատելով կատարված աշխատանքը, ունենք որոշակի նկատառումներ, որոնք հանգում են հետևյալին.

Առաջին. մեր կարծիքով հեղինակը խոսելով սոցիալ-իրավական պետության էության մասին, այնուհետև անհրաժեշտ էր բացահայտել սոցիալ-իրավական պետության բաղադրիչների բովանդակային առանձնահատկությունները, մասնավորապես՝ սոցիալականի և իրավականի բնութագրական կողմերը դրանց միասնականության համատեքստում, թե ինչպե՞ս են սոցիալականը (սոցիալական արդարությունը, փաստացի հավասարությունը և այլն) մեկտեղվում իրավականի (իրավաբանական (ձևական) հավասարության, ազատության և այլն) հետ:

Երկրորդ. քննարկելով սահմանադրության և սահմանադրականության հարցերը սոցիալ-իրավական պետության համատեքստում, անհրաժեշտ էր պարզել այն հասարակական հարաբերությունների նորմատիվ կարգավորումները, որոնցում հարկ է ապահովել սահմանադրականության հիմնական սկզբունքները, մասնավորապես՝ սահմանադրական նորմերի անմիջական և իրական գործադրման մեխանիզմները:

